



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

02. ապրիլի 2010 թ.

№ 82-ՇԿ

<<ԳՅՈՒՄՐՈՒ ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՏԵՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ N 2 ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թվականի մայիսի 20-ի N 730-Ն որոշման 2-րդ կետի պահանջով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել «Գյումրու Ֆրիտյոֆ Նանտենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության N2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Կազմակերպություն) կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:


2. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի իրավաբանական վարչության պետին՝

1) մեկամսյա ժամկետում Կազմակերպության կանոնադրությունը սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման,

2) Կազմակերպության կանոնադրության պետական գրանցումից հետո 15-օրյա ժամկետում իրականացնել իրավաբանական անձին հատուկ ատրիբուտների (կնիք, դրոշմակնիք և այլն) ձևավորման հետ կապված կազմակերպչական աշխատանքներ:

3. Սույն հրամանի հսկողությունը դնել նախարարի տեղակալ Ֆ.Բերիկյանի վրա:

Handwritten notes in the bottom left corner.



Ա.Գրիգորյան

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ
Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

ԳՅՈՒՄՐՈՒ ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ ԱՆՎ.ԵՐԵՎ.
ԽՆԱՄՔԻ ԵՎ ՊԱՇՏՊԱՆ.ԹԻՎ 2 ԳԻՇԵՐՕԹ.ՀԱԱ,

(կազմակերպության լրիվ անվանումը և կազմակերպչի իրավական տեսակը)
Պետական (ոչ առևտրային)
կազմակերպություն

ՀՎՀՀ

05522929

Հաշվառման է վերցված *Գյումրու* հարկային (տարածքային)
տեսչության կողմից 25/10/2000 թ.


 Գյումրու

 հարկային (տարածքային) տեսչության պետ

 Մաշադյան Ռաֆիկ

 (անուն, ազգանուն)

 (ստորագրություն)



ԿՆԻՔ

Ն Ե Ր Դ Ի Ր 005

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական 03 և 059411

Անվանումը «Գյումրու Բրիգադի Գանձակեր անվան
կրթիքի և արհեստագիտության
թիվ 2 գիշերօթիկ հասարակարգում»
ՊՈՒԿԿ

Գտնվելու վայրը (հասցեն)

7

Այլ տեղեկություններ Սեփական Կարասկայան Անտիպոլ

ՔՅ 0618834 պրևս 26 12 1997թ 016

Քիսակի Եսպր, Գ. Գյումրի

Քիսակայի 2.58^ա թ. 32

Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)

10. 09 2009

Ն Ե Ր Դ Ի Ր 005

իրավաբանական անձի պետական գրանցման վկայականի

Վկայական 03 և 059411

Անվանումը «Գյումրու Բրիգադի Գանձակեր անվան
անվան կրթիքի և արհեստագիտության
թիվ 2 գիշերօթիկ հասարակարգում»
ՊՈՒԿԿ

Գտնվելու վայրը (հասցեն)

7

Այլ տեղեկություններ Սեփական Կարասկայան Անտիպոլ

Կար Խաբաթաբանական Կանոնադրու

թյունը և պետական վկայական

գրանցվել են 10.09.2010թ


Ներդիրն ուժի մեջ է վկայականի հետ

շարունակելի

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐ

(ստորագրություն)


10. 09 2010



[Handwritten signature]

«ՀԱՍՏԱՏՎԱԾ Է»
Հայաստանի
Հանրապետության
աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարարի

02.09.2010թ. թվականի
Գյումրու տարածքային բաժնի
Գյումրու տարածքային բաժնի կողմից




Տպագրված է ընդամենը 5 օրինակ
ՕՐԻՆԱԿ - 4-----

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»
Հայաստանի Հանրապետության
իրավաբանական անձանց պետական
ռեգիստրի Գյումրու տարածքային
բաժնում

07.03.2003 թվական
գրանցման թիվ 29 210 01937
վկայական թիվ 0316 059411
Գյումրու տարածքային բաժնի կողմից

«10» 09 ----- 2010թ.
Գյումրու Տ/Բ պետ
[Handwritten signature]



<<ԳՅՈՒՄՐՈՒ ՖՐԻՏՅՈՑ ՆԱՆՍԵՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԵՒԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԻ
ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ N 2 ԳԻՇԵՐՕԹԻԿ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ>>
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Երևան 2010թ.

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների խնամքի և պաշտպանության N2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող, սոցիալական բնագավառում գործունեություն իրականացնող պետական ոչ առևտրային կազմակերպություն է:
2. Կազմակերպությունը հանդիսանում է «Գյումրու «Ֆրիտյոֆ Նանսենի» անվան վանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության /գրանցման համարը՝ 2921001937, վկայականի համարը՝ 03 Ա 059411, գրանցման ամսաթիվը՝ 07.03.2003 թ. / իրավահաջորդը:
3. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
4. Կազմակերպության պահպանման ծախսերը ֆինանսավորվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին: Կազմակերպության ֆինանսական միջոցները կարող են գոյանալ նաև Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների և ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող, ինչպես նաև օրենքով չարգելված միջոցներից:
5. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, իր անունից կարող է կնքել պայմանագրեր, ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
6. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
7. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակը՝ երեխաների խնամքի ու դաստիարակության վճարովի ծառայությունների մատուցում:
8. Հիմնադիրը պատասխանատու չէ իր ստեղծած կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունն՝ իր հիմնադրի պարտավորությունների համար:
9. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով ու իր հայերեն անվանմամբ կլոր կնիք, ինչպես նաև կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և անհատականացման այլ միջոցներ:
10. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է բանկերում (այդ թվում նաև օտարերկրյա) բացել հաշիվներ ինչպես Հայաստանի Հանրապետության դրամով, այնպես էլ արտարժույթով: Բանկային հաշիվների գումարներին ավելացած տոկոսները և արտոնությունները պատկանում են կազմակերպությանը:
11. Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումը և գործունեությունը:
12. Կազմակերպության անվանումն է հայերեն լրիվ՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Գյումրու Ֆրիտյոֆ Նանսենի անվան երեխաների

խնամքի և պաշտպանության N2 գիշերօթիկ հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն ,

հայերեն կրճատ՝ Գ Ֆ Ն Ա Ե Խ Պ N 2 Գ Հ Պ Ո Ա Կ

ռուսերեն՝ “Гюмрииский интернат имени Фритъофа Нансена N 2 по уходу и защите детей” Министерство труда и социальных вопросов Республики Армения, государственная не коммерческая организация

ռուսերեն կրճատ՝ Г И И Ф Н N 2 П У З Д Г Н К О

անգլերեն՝ Gyumri Boarding Instiution N2 for Children Care and Protection after Fridtjof Nansen State Non Commercial Organization of the Ministry of Labour and Social Issues of the Republic of Armenia.

անգլերեն կրճատ՝ G B I N 2 C C P A F N S N C O

13. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ ք. Գյումրի, Ա.Շիրակացու 10

II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

14. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, աղքատ (սոցիալապես անապահով) ընտանիքի՝ 6-18 տարեկան երեխաների խնամքի և դաստիարակության ապահովումը, սոցիալ-հոգեբանական վերականգնման աշխատանքների իրականացումը, նրանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելը, սննդով, հագուստով և կենցաղային իրերով ապահովումը, հանրակրթական ուսումնական հաստատություններում ուսուցման և բժշկական օգնության կազմակերպումն է:
15. Կազմակերպությունը պատասխանատու է պետական սոցիալական նվազագույն չափորոշիչներին համապատասխան երեխաների խնամքի և դաստիարակության կազմակերպման, կյանքի անվտանգության և առողջության, ինչպես նաև սանիտարական նորմերի ու կանոնների պահպանման համար:
16. Կազմակերպությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.
- 1) երեխաներին մատուցվող ծառայությունների, շենքի պայմանների, հատուկ դեպքերում տարհանման հնարավորությունների, կազմակերպությանը հարող տարածքի, արտակարգ իրավիճակներում ժամանակին օգնություն ցուցաբերելու, պաշտպանելու և այլնի մասին կարևոր տեղեկատվությամբ ապահովում՝ հաշվի առնելով նրանց տարիքային առանձնահատկությունները.
 - 2) երեխայի անվտանգության և պաշտպանության ապահովում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,
 - 3) կազմակերպությունում երեխայի ինտեգրման ապահովում հաշվի առնելով նրա նոր սոցիալական միջավայրին հարմարվելու անհատական առանձնահատկությունները.
 - 4) կազմակերպությունում գտնվելու ամբողջ ժամանակահատվածում երեխայի խնամքի կազմակերպում՝ ապահովելով խնամքի շարունակականության սկզբունքը, ստեղծելով ընտանեկանին հնարավորինս մոտ պայմաններ և առաջնորդվելով անհատական մոտեցմամբ.
 - 5) երեխային առողջ, անհրաժեշտ քանակի և տարիքին համապատասխան սննդով ապահովելը.

- 6) երեխային հագուստով և անձնական օգտագործման պարագաներով ապահովելը՝ ելնելով երեխայի տարիքային առանձնահատկություններից.
- 7) երեխային կյանքի համար անվտանգ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սանիտարահիգիենիկ նորմերին համապատասխան բնակելի տարածությամբ ապահովելը՝ հաշվի առնելով նրա սեռը, տարիքը և առողջական վիճակը.
- 8) երեխայի առողջ ապրելակերպի (սնունդ, ֆիզկուլտուրա և սպորտ, անձնական հիգիենա, ազատ ժամանց) համար անհրաժեշտ պայմանների ապահովում.
- 9) երեխայի բազմակողմանի և ներդաշնակ զարգացման ապահովում՝ հաշվի առնելով նրա հոգեկան, սեռատարիքային, ազգային և էթնիկական առանձնահատկությունները, անձի նախասիրությունները, հետաքրքրությունները, ընդունակություններն ու պահանջմունքները.
- 10) երեխայի ուսուցման կազմակերպում՝ համայնքի հանրակրթական դպրոցներում.
- 11) ընտանիքի և հարազատների հետ երեխայի կապի ապահովում.
- 12) 14-18 տարեկան երեխաների մասնագիտական կողմնորոշման, նրանց աշխատանքի տեղավորման աջակցության ապահովում՝ համագործակցելով զբաղվածության տարածքային մարմինների և գործատուների հետ,
- 13) երեխաների հետ անմիջական աշխատողների պարբերական մասնագիտական վերապատրաստման և բժշկական ստուգման ապահովում.
- 14) երեխայի խնամքի և պաշտպանության հետ կապված այլ գործառույթների իրականացում:

III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

17. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:
18. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) կազմակերպության կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը:
19. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:
20. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:
21. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

IV. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՅՎԱԾ ԳՈՒՅՔԸ

22. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով կարող է ամրացվել ցանկացած գույք:

23. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:
24. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, հանձնելու անհատույց օգտագործման: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Կազմակերպությանն ամրացված պետական գույքը վարձակալության հանձնելիս ստացված վարձավճարներն ուղղվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

25. Կազմակերպությունն իր հիմնական գործունեությանը զուգընթաց կարող է զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ՝ միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:
26. Կազմակերպությունը գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հիմնադրի սահմանած կարգով:
27. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

28. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, նրա լիազորած պետական մարմինը, գործադիր մարմինը՝ տնօրենը:
29. Կազմակերպության հիմնադիրը Հայաստանի Հանրապետությունն է՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարության:
30. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
31. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝
- 1) կազմակերպության հիմնադրումը,
 - 2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,
 - 3) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը,
 - 4) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:
32. Լիազորված պետական մարմինն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

33. Լիազորված պետական մարմինը՝

1) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխություններն ու լրացումները.

2) իրականացնում է կազմակերպության գործունեության վերահսկողությունը.

3) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները.

4) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում է դրա գործունեության վերստուգման արդյունքները.

5) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման ու պահպանման նկատմամբ.

6) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, համաձայնություն է տալիս կազմակերպության գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

7) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

8) հաստատում է կազմակերպության եկամուտների և տարեկան ծախսերի նախահաշիվը.

9) տնօրենի ներկայացմամբ՝ հաստատում է կազմակերպության կառուցվածքը և աշխատողների թիվը.

10) իրականացնում է օրենքով, հիմնադրի որոշումներով և կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

34. Կազմակերպության ընթացիկ գործունեությունը ղեկավարում է տնօրենը, որին պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմինը՝ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

35. Տնօրենն օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

36. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

37. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

38. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի և լիազորված պետական մարմնի՝ օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

39. Տնօրենի բացակայության դեպքում՝ լիազորված պետական մարմնի գրավոր որոշման համաձայն այդ լիազորություններն իրականացնում է այլ անձ:

40. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է գործարքներ.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

3) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

4) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատակիցներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

5) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

6) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

7) լիազորված պետական մարմնի հաստատմանն է ներկայացնում կազմակերպության կառուցվածքը և աշխատողների թիվը.

8) օրենքով և կազմակերպության կանոնադրությամբ սահմանված - իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

9) հաստատում է սոցիալ-մանկավարժական խորհրդի կազմը.

10) սահմանված կարգով՝ լիազորված պետական մարմին է ներկայացնում կազմակերպության եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը.

11) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

41. Երեխաների խնամքի, ուսուցման, բժշկասոցիալական, սոցիալ-հոգեբանական վերականգնման, դաստիարակչական հարցերը քննարկելու և լուծելու նպատակով կազմակերպությունում ստեղծվում է սոցիալ-մանկավարժական խորհուրդ՝ խորհրդակցական մարմնի կարգավիճակով (այսուհետ՝ խորհուրդ):

42. Խորհրդի կազմում ընդգրկվում են տնօրենը, մանկավարժը, բժիշկը, այն դպրոցի (դպրոցների) տնօրենը, որտեղ սովորում են կազմակերպության սաները և այլ մասնագետներ, լիազորված պետական մարմնի ներկայացուցիչը:

43. Խորհուրդը կազմված է 7 անդամից:

44. Խորհրդի նախագահը ընտրվում է խորհրդի անդամներից:

45. Խորհրդի նիստերը գումարվում են եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:

46. Խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները.

1) կազմակերպության աշխատանքային պլանի, բուժպրոֆիլակտիկ ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրերի քննարկում և լիազորված պետական մարմին դրանց վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելը.

2) սաների հանրակրթության կազմակերպման հետ կապված հարցերի քննարկում.

3) դաստիարակչական խմբերի աշխատանքների կազմակերպման հարցերի քննարկում.

4) դաստիարակների, բժշկական անձնակազմի և այլ աշխատողների աշխատանքային գործունեության քննարկում.

5) երեխաների խնամքի և սպասարկման նոր ձևերի ներդրման նպատակահարմարության քննարկում.

6) երեխաների մասնագիտական կողմնորոշման, նրանց հետագա ուսման կազմակերպման հարցերի քննարկում

7) երեխաների խնամքի և դաստիարակության հետ կապված այլ հարցերի քննարկում:

47. Կազմակերպության աշխատողների իրավունքները և պարտականությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, սույն կանոնադրությամբ, կոլեկտիվ պայմանագրով, աշխատանքային ներքին կանոնակարգերով և այլ իրավական ակտերով:

VII. ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՍԲ

48. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմիններ:
49. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը կարող է ենթարկվել վերստուգման (աուդիտի)՝ լիազոր մարմնի կողմից ընտրված աուդիտորի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության ֆինանսական գործառույթ իրականացնող մարմնի կողմից:

VIII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

50. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:
51. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի:
52. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
53. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականությունները իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:
54. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Այն կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:
55. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:
56. Կազմակերպության լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջները բավարարելուց հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե: